

ԴԱՍ 1

ՓԱԽՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱՏԱՐՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱՄԱՏԵՔՍՏԸ. ՓԱԽՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԻՄՆԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ. ՄԱԿ ՓԳՏ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՆԴԱՏԸ

Այս դասի շրջանակներում Ձեզ կներկայացվի՝

- ❖ փախսարականների միջազգային պաշտպանության առաջացման պատմությունն ու համարեքսը
- ❖ փախսարականների միջազգային պաշտպանության ոլորտում գործունեություն ծավալած հիմնական միջազգային կառույցների գործունեությունը:

Մարդկանց **միգրացիան** թերևս նույնքան հին պատմություն ունի, որքան մարդկությունը: Ժամանակակից աշխարհում միգրացիան պայմանականորեն կարելի է բաժանել երեք տեսակի՝

- (ա) օրինական կամ արտոնված միգրացիա,
- (բ) անօրինական կամ չարտոնված միգրացիա,
- (գ) հարկադրված միգրացիա:

Միջազգային իրավունքի մաս կազմող մարդու իրավունքների միջազգային իրավունքը պարմականորեն անրագրել է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Այս իրավունքի ուժով յուրաքանչյուր անձ ազատ է դուրս գալ իր բնակության երկրից, սակայն դա չի ենթադրում իրավունք մուտք գործել որևէ այլ երկրի տարածք: Միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ չի կարգավորում անձանց մուտքը երրորդ պետությունների տարածք՝ հարցի լուծումը թողնելով պետությունների հայեցողությանը:

Այս առումով կարևոր բացառություն է փախսարականների միջազգային իրավունքը, որն, ի դեպ, սկսել է ձևավորվել ավելի վաղ, քան մարդու իրավունքների միջազգային իրավունքը:

Փախսարականների իրավունքի ձևավորումը սկսվեց 1920-ական թվականներին և ուղիղ հեղուսնք էր 1910-ական թվականների իրադարձությունների՝ Առաջին համաշխարհային պատերազմի, Ռուսական ու Օսմանյան կայսրությունների փրոհման և, մասնավորապես, Մեծ Եղեռնի: Դրանց արհավիրքներից փախչող անձինք սփռվել էին աշխարհով մեկ՝ չունենալով կացարան, գոյարևման միջոցներ և չկարողանալով ապավինել իրենց քաղաքացիության պետությունների պաշտպանությանը:

Նորաստեղծ **Ազգերի Լիգայի** շրջանակներում 1920 թ. Ֆրիպոյթ Նանսենը ստանձնեց փախսարականների և ռազմագերիների հարցերով հանձնաժողովի ղեկավարությունը: 1921 թ. **ԿեոՄԿ** նախաձեռնությամբ Ազգերի Լիգան իրավիրեց միջազգային կոնֆերանս, որի շրջանակներում որոշվեց ստեղծել փախսարականների հարցերով գերագույն հանձնակարարի պաշտոն: Այս պաշտոնը նույնպես ստանձնեց Ֆրիպոյթ Նանսենը:

1922 թ. ընդունվեց ռուս փախսարականներին անձը հասարափող փաստաթղթերի փրամադրման մասին համաձայնագիր, որը 1924 թ. լրացվեց՝ փարածվելով նաև հայ

փախստականների վրա: Այս փաստաթուղթը (վկայականը) հայտնի է որպես «Նանսենի անձնագիր»:

1926 թ. համաձայնագիրը կրկին լրացվեց՝ հնարավորություն տալով «Նանսենի անձնագիր» ունեցող փախստականներին օգտվել մասնակից երկրներում բնակվելու, ազատ տեղաշարժվելու իրավունքից: Միաժամանակ ստեղծվեց փախստականների օգնության հարուկ հիմնադրամ: Ըստ առկա գնահատականների՝ Մեծ Եղեռնից փրկված ավելի քան երեք հարյուր հազար հայեր ստացել են «Նանսենյան անձնագիր»:

1928 թ. Ժնևում կայացած կոնֆերանսում մշակվեցին փախստականների վերաբերյալ երեք համաձայնագրեր՝ ռուս և հայ փախստականների իրավական կարգավիճակի մասին, հօգուտ ռուս և հայ փախստականների ընդունված որոշ միջոցներն այլ փախստականների վրա տարածելու մասին և Փախստականների հարցերով Ազգերի լիգայի գերագույն հանձնակազմի գործառույթների մասին: Նշվածներից առաջինն ընդհանուր առմամբ հստակեցնում էր 1922 թ. Նամաձայնագրի դրույթները, ինչպես նաև հորդորում էր ստանդարտ փախստականներին սովորաբար օտարերկրացիներին փոխադարձության սկզբունքով տրամադրվող իրավունքներ և առավելություններ այն դեպքերում, երբ փոխադարձության սկզբունքը նրանց վրա չի տարածվում: Երկրորդ համաձայնագիրը առաջինի որոշ դրույթներ տարածում էր ասորի, ասորի-քալդի, թուրք և ասիմիլացված փախստականների վրա: Երրորդ համաձայնագիրը Փախստականների հարցերով գերագույն հանձնակազմի ներկայացուցիչներին լայն լիազորություններ էր վերապահում աշխարհի բազմաթիվ երկրներում փախստականներին աջակցություն ցուցաբերելու համար: Սակայն այս համաձայնագրերից ոչ մեկը չստորագրվեց բավարար քանակի պետությունների կողմից և դրանք այդպես էլ մնացին թղթի վրա:

1930 թ. մահացավ Ֆրիդրիխ Նանսենը, իսկ ընդամենը մի քանի տարուց Գերմանիայում նացիզմի հաստատումը փախստականների նոր ալիք առաջացրեց: 1931-1938 թթ. Նանսենի գործը շարունակում էր Ազգերի լիգայում ստեղծված Փախստականների հարցերով Նանսենի անվան միջազգային գրասենյակը, իսկ 1938 թ.՝ Փախստականների հարցերով միջկառավարական հանձնաժողովը: Այդ տարիներին մշակվեցին ևս մի քանի միջազգային պայմանագրեր, որոնցից առավել կարևորն էր Փախստականների միջազգային կարգավիճակի մասին 1933 թ. Կոնվենցիան, որն առաջին անգամ կարգավորման առարկա դարձրեց փախստականի անձնական կարգավիճակի, զբաղվածության, սոցիալական իրավունքների հարցերը, ինչպես նաև սահմանեց **փախստականներին վտարելու արգելքը (non-refoulement)** և ծագման երկրից նրանց մուտքը թույլատրելու պարտականությունը: 1930-ական թվականներին մշակվեցին մի շարք այլ միջազգային պայմանագրեր և ստեղծվեցին որոշ մարմիններ փախստականների խնդիրներով զբաղվելու համար, սակայն դրանք, ընդհանուր առմամբ, էական ազդեցություն չունեցան Երկրորդ աշխարհամարտի տարիներին փախստականների աննախադեպ հիմնախնդրի լուծման գործում: **Ըստ որոշ գնահատականների՝ այդ տարիներին Եվրոպայում մոտ 60 միլիոն մարդ ստիպված էր լքել իրենց տները՝ դառնալով փախստական կամ ներքին տեղահանված անձ:**

Երկրորդ աշխարհամարտի ավարտին ստեղծված Միավորված ազգերի կազմակերպությունն (ՄԱԿ) իր գործունեության առաջին իսկ օրերից կանգնեց փախստականների խնդրի առաջ: ՄԱԿ-ի նպատակներից է, ըստ Կանոնադրության 1-ին

հողվածի, իրականացնել միջազգային համագործակցություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի փարածման և քաջալերման գործում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից: Այս նպատակը ՄԱԿ-ի գործունեության առաջին փարիներին՝ որպես առաջնահերթություն, ենթադրում էր փախստականների հիմնախնդիրների լուծումը:

1946 թ. ՄԱԿ-ի շրջանակներում սրեղծվեց Փախստականների միջազգային կազմակերպությունը, որի հիմնական նպատակն էր **փախստականների ու ներքին տեղահանվածների ռեպարիացիան ու վերաբնակեցումը**, և այն այս ուղղությամբ ակտիվորեն իրականացնում էր օպերատիվ միջոցառումներ: Այս կառույցն ի սկզբանե սրեղծվել էր ժամանակավոր հիմունքներով, և զուգահեռ ընթանում էին համապատասխան մշտական կառույցի սրեղծման շուրջ քննարկումները: 1949 թ. դեկտեմբերի 3-ին ՄԱԿ Գերագույն վեհաժողովն իր 319 բանաձևով հիմնադրեց ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՆ), իսկ 1950 թ. դեկտեմբերի 14-ի 428 բանաձևով հաստատեց ՄԱԿ ՓԳՆ Կանոնադրությունը: 1951 թ. հաստատվեց և 22.04.1954 թ. ուժի մեջ մտավ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, որը դարձավ այս ոլորտի առանցքային միջազգային պայմանագիր: Ներկայումս կոնվենցիային և դրա 1967 թ. արձանագրությանը մասնակցում են մոտ 150 պետություն (այդ թվում՝ Նայասրանի Նանրապետությունը, որը կոնվենցիային և արձանագրությանը միացել է 06.07.1993 թ.): Կոնվենցիան սահմանում է փախստականի կարգավիճակի հայցման հիմքերը, կարգավիճակը հայցող և սրացած անձանց իրավական կարգավիճակը, իրավունքները և երաշխիքները: Կոնվենցիայի նշված արձանագրությունն ունի խիստ կարևոր նշանակություն, քանի որ կոնվենցիան կիրառվում է միայն մինչև 1951 թ. հունվարի 1-ը Եվրոպայում կամ այլուր տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում փախստական դարձած անձանց նկատմամբ: Արձանագրությունը վերացնում է այս սահմանափակումը՝ ապահովելով Կոնվենցիայի կիրառումն առանց փարածքային կամ աշխարհագրական սահմանափակումների:

Նաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի համապատասխան դրույթները մանրամասն քննարկվելու են հաջորդող դասերի շրջանակներում, այս դասում չկա դրա բովանդակային քննարկման անհրաժեշտությունը: Ուստի այժմ հատուկ քննարկման նյութ կդարձնենք ՄԱԿ ՓԳՆ-ն:

Ըստ կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՆ-ն ապաքաղաքականացված, մարդասիրական և սոցիալական բնույթի գործունեություն իրականացնող կառույց է, որի հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանություն փրամադրելը: Ի սկզբանե ՄԱԿ ՓԳՆ-ն նույնպես սրեղծվել է որպես ժամանակավոր կառույց, սակայն ՄԱԿ Գերագույն վեհաժողովի 2003 թ. 58/153 բանաձևով դրա գործունեությունը սահմանվեց անժամկետ՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը: **Ցավոք, վերջին փարիներին այս խնդիրների ծավալը շարունակաբար աճում է. եթե 2004 թ. ավարտին ՄԱԿ ՓԳՆ մանդատի ներքո ընկնող մտահոգության առարկա հանդիսացող անձանց քանակը պակաս էր 20 միլիոնից, ապա 2015 թ. ավարտին նրանց թիվը եռապարկվել է՝ հասնելով շուրջ 60 միլիոնի:** Նայասրանի Նանրապետությունը փախստականների աննախադեպ մեծ ներհոսք է ունեցել արցախյան պարերազմի փարիներին: Սակայն Սիրիայում 2012 թվականից ծավալվող իրադարձությունները բերել են **մտահոգության առարկա հանդիսացող անձանց** նոր ներհոսքի, և ներկայումս խնդիրը Նայասրանի համար շարունակում է մնալ արդիական:

Այս պահին հարկ է ավելի մանրամասն անդրադառնալ ՄԱԿ ՓԳՏ առաքելությանը և մանդատին:

Իր մանդատի շրջանակներում ՄԱԿ ՓԳՏ-ն զբաղվում է ոչ միայն փախստականների, այլև հեղինակ կարեգործիչների անձանց հիմնախնդիրներով, որոնք բոլորը միասին համարվում են ՄԱԿ ՓԳՏ **մտահոգության առարկա հանդիսացող անձինք՝**

- ❖ **Ներքին տեղահանված անձինք**
- ❖ **Վերադարձող անձինք**
- ❖ **Ապարիդներ**
- ❖ **Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձինք**

ՄԱԿ ՓԳՏ առավել լայն մանդատը վերաբերվում է փախստականներին և ապաստան հայցող անձանց: Այս մանդատի շրջանակներում ՄԱԿ ՓԳՏ-ն տրամադրում է միջազգային պաշտպանություն և մարդասիրական օգնություն, և ձգտում է ապահովել համապատասխան անձանց հիմնախնդիրների երկարապլուծ լուծումներ: Այս նպատակով ՄԱԿ ՓԳՏ-ն ակտիվորեն համագործակցում է ինչպես ազգային իշխանությունների, այնպես էլ միջազգային կառույցների ու մասնավոր կազմակերպությունների հետ:

Ներքին տեղահանված անձանց մասով ՄԱԿ ՓԳՏ մանդատն ունի խիստ սահմանափակ բնույթ, ինչը բխում է այն հանգամանքից, որ այդ անձինք շարունակում են գտնվել իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրի պաշտպանության ներքո: Ուստի ՄԱԿ ՓԳՏ-ի մանդատը կախված է համապատասխան պետության համաձայնությունից: Այն որպես կանոն սահմանափակվում է մարդասիրական օգնություն ցուցաբերելով:

Վերադարձող անձանց մասով ի սկզբանե ենթադրվում էր, որ ՄԱԿ ՓԳՏ մանդատը ավարտվում է համապատասխան անձանց վերադարձի պահից, քանի որ նրանք ֆորմալ առումով դադարում են փախստական լինել: Սակայն ներկայումս ՄԱԿ ՓԳՏ-ն իրականացնում է գործունեություն, որը միտված է միջազգային պաշտպանությանն ու հիմնախնդիրների երկարապլուծ ապահովելուն: Այս մանդատը բխում է այն հանգամանքից, որ վերադարձը համապատասխան փախստականի հիմնախնդիրների երկարապլուծ լուծման մաս է:

Ապարիդների մասով ՄԱԿ ՓԳՏ մանդատը ենթադրում է գործողություններ ապարիդների հայտնաբերման, ապաքաղաքացիության կանխարգելման, նվազեցման և ապարիդների պաշտպանության ոլորտներում:

Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձանց մասով ՄԱԿ ՓԳՏ մանդատն առավելապես բխում է մարդասիրական նկատառումներից և առավել արդիական է այնպիսի իրավիճակներում, երբ գործնականում դժվար է տարանջատել այդ անձանց և փախստականների կարգավիճակի իրավունք ունեցողներին: Ասվածի վառ օրինակ է Սիրիայից Նայաստան տեղափոխված անձանց մասով իրավիճակը: **Այդ անձանց զգալի մասը Նայաստան ժամանելուց առաջ կամ հետո ստանում են ՆՏ քաղաքացիություն, ինչն իրենց գրկում է փախստականի կարգավիճակի իրավունքից:** Բայց քանի որ նրանց

փաստացի վիճակը գրեթե նույնական է Սիրիայից տեղափոխված այն անձանց վիճակին, ովքեր հայցում են կամ սրացել են փախստականի կարգավիճակ՝ ՄԱԿ ՓԳՏ-ն ակտիվորեն աջակցում է նաև իրենց խնդիրների (առավելապես տնտեսական և սոցիալական բնույթի) լուծմանը:

- Իր մանդատի իրականացման շրջանակներում ՄԱԿ ՓԳՏ գլխավոր նպատակներն են՝
- ❖ ապահովել, որ ազգային օրենսդրությունը մեկնաբանվի ու կիրառվի փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ միջազգային իրավական պարտավորությունների պահանջներին համապատասխան.
 - ❖ աջակցել ազգային իշխանություններին՝ էականորեն ամրապնդելու փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգերը՝ համահունչ արդարության ու արդյունավետության հրամայականներին.
 - ❖ տրամադրել ֆինանսական և տեխնիկական աջակցություն ապաստանի համակարգերի ամրապնդման համար.
 - ❖ աջակցել ինտեգրման և զարգացման ազգային ծրագրերում փախստականների խնդրի ներառմանը.
 - ❖ տրամադրել նպատակաուղղված աջակցություն, որը կնպաստի առավել խոցելի անձանց ինքնաբավությանը և ինտեգրմանը (այդ թվում՝ ներգրավելով տեղական գործընկեր կազմակերպություններ):

Սույն դասի շրջանակներում Դուք տեղեկացաք, թե ինչպես է փախստականների միջազգային պաշտպանությունը ձևավորվել ի պատասխան 1910-ական թվականների արհավիրքների, որոնց հետևանքով միլիոնավոր մարդիկ (որոնց նշանակալի մասն էին Մեծ եղեռնից փրկված հայերը) տեղահանվեցին իրենց հայրենիքից և սփռվեցին աշխարհով մեկ՝ մնալով առանց իրենց քաղաքացիության պետության պաշտպանության:

Ձեզ նաև ներկայացվեց փախստականների պաշտպանության համար պատասխանատու միջազգային կառույցների գործունեությունը:

Նաջորդ դասում կքննարկվի **փախստական** հասկացությունը: Քանի որ 1951 թ. Կոնվենցիան այս հասկացությունը սահմանում է փախստականի կարգավիճակի տրամադրման հիմքերի թվարկման միջոցով, հաջորդ դասում Ձեզ կներկայացնենք այդ հիմքերը և մանրամասն կքննարկենք դրանց մի մասը (մնացածները կքննարկենք 3-րդ դասի շրջանակներում):

ԲԱՌԱՐԱՆ

Միգրացիա – անձի կամ անձանց խմբի տեղաշարժը միջազգային սահման հատելու միջոցով կամ պետության ներսում: Դա բնակչության տեղաշարժ է, որը ենթադրում է մարդկանց ցանկացած տեսակի տեղաշարժ՝ անկախ դրա տևողությունից և պարճառներից: Այն ներառում է փախստականների, տեղահանված անձանց, փնտրեսական միգրանտների և այլ նպատակներով տեղաշարժվող անձանց միգրացիան:

Փախստականների միջազգային իրավունք – միջազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ, որը լայն իմաստով մարդու իրավունքների միջազգային իրավունքի մաս է: Ժամանակակից փախստականների միջազգային իրավունքը ձևավորվել է 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի և դրա 1967 թվականի արձանագրության դրույթների հիման վրա:

Նանսենի անձնագիր – միջազգային փաստաթուղթ, որը հավաստում էր դրա իրավաբար ինքնությունը: Առաջին անգամ փրվել է Ազգերի Լիգայի կողմից քաղաքացիություն չունեցող փախստականներին՝ մեծամասամբ ռուս ու հայ փախստականներին: Այդ փաստաթուղթը փրվում էր երկու պարտադիր պայմանների դեպքում՝ 1. անձի ինքնությունը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, 2. փաստաթղթի առկայության դեպքում, որը հավաստում էր, որ անձը հանդիսանում է ներգաղթած:

Փախստականների չվերադարձելիության սկզբունք (non-refoulement) – փախստականների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է, որը պետություններին արգելում է փախստականներին որևէ կերպ վերադարձնել այն պետություններ կամ տարածքներ, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է սպառնալ վրանգ: Այս սկզբունքը միջազգային սովորության իրավունքի բաղկացուցիչն է և այդ իսկ պարճառով պարտադիր է բոլոր պետությունների համար՝ անկախ վերջիններիս կողմից 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի վավերացումից: Այս սկզբունքի առաջին հիմքը դրվեց Փախստականների միջազգային կարգավիճակի մասին 1933 թ. Կոնվենցիայով, որը սահմանեց փախստականներին վարելու արգելքը և ծագման երկրից նրանց մուտքը թույլատրելու պարտականությունը (որոնք ներկայումս չվերադարձելիության սկզբունքի բաղկացուցիչն են):

Ներքին տեղահանված անձ – այն անձինք կամ անձանց խմբերը, որոնք մասնավորապես գինված ընդհարումների, համապարած բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական կամ մարդածին աղետների պարճառով կամ դրանց հետևանքներից խուսափելու համար հարկադրված կամ պարտավորված փախչել են՝ լքելով իրենց տները կամ մշտական բնակության վայրերը և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված որևէ պետական սահման:

Ռեպատրիացիա – հայրենադարձություն: Գերիների, փախստականների և այլ անձանց վերադարձը հայրենիք:

Վերաբնակեցում – մարդկանց (փախստականների, ներքին տեղահանված անձանց և այլն) տեղափոխումը սովորաբար երրորդ երկրում գտնվող այլ աշխարհագրական տարածք և միջավայր, ինչպես նաև նրանց ինտեգրումը փոխաբար և միջավայրում: Փախստականների պարագայում վերաբնակեցումը նրանց փոխանցումն է մի երկրից (որտեղ նրանք ապաստան են փնտրել) մեկ այլ պետություն, որը համաձայնվել է ընդունել նրանց: Փախստականներին այդպիսի երկրում սովորաբար փրամադրվում է ապաստան կամ որևէ այլ տեսակի երկարաժամկետ կացության իրավունք և, շար դեպքերում, նրանք ունեն քաղաքացիություն ստանալու հնարավորություն:

Մրահոգության առարկա հանդիսացող անձ – այնպիսի խմբի պատկանող անձ, ում խնդիրներով իր մանդատի շրջանակներում զբաղվում է ՄԱԿ ՓԳՏ-ն: Այն, մասնավորապես, ներառում է փախստականներին, ներքին տեղահանված անձանց, վերադարձող անձանց, ապարիղներին ու միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձանց:

Ապաստան – լայն իմաստով՝ պետության կողմից իր քաղաքացի չհանդիսացող և իր ծագման երկրում հետապնդումների ենթարկվող անձին սեփական տարածքում պրամադրվող պաշտպանություն: 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանել է յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքը: Փախստականների միջազգային իրավունքի շրջանակներում ապաստան պետք է պրամադրվի փախստականի կարգավիճակ հայցող կամ ստացած յուրաքանչյուր անձի, իսկ որոշ դեպքերում՝ նաև նրանց ընտանիքի անդամներին:

Վերադարձող անձ – փախստականների միջազգային իրավունքի շրջանակներում՝ փախստական, ով կամավոր ռեպարիացիայի է դիմում՝ վերադառնալով իր ծագման երկիր: Նման գործողության ուժով նա կորցնում է փախստականի կարգավիճակը, սակայն ՄԱԿ ՓԳՏ համար շարունակում է մնալ մրահոգության առարկա հանդիսացող անձ, քանի որ վերադարձը համապատասխան փախստականի հիմնախնդիրների երկարապես լուծման մաս է:

Ապարիղ – «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թ. կոնվենցիայի համաձայն՝ վավերացված ՏՏ կողմից,

«ապարիղն» («քաղաքացիություն չունեցող անձ») այն անձն է, ով որևէ պետության կողմից իր իսկ օրենսդրության հիման վրա չի համարվում քաղաքացի: Քաղաքացիություն չունենալը կարող է բխել տարբեր պատճառներից, օրինակ՝ քաղաքացիության պրամադրմանը վերաբերող օրենքների միջև հակասություններ, պետությունների միջև տարածքների փոխանցում, քաղաքացիությունից զրկում կամ հրաժարում և այլն:

Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձ- այն անձն է, ով ֆորմալ առումով փախստական չէ, բայց ում փաստացի վիճակը և խնդիրները գրեթե նույնական են փախստականների վիճակին ու խնդիրներին (օրինակ՝ Սիրիայից Նայաստան տեղափոխված անձինք, ովքեր չեն կարող հավակնել փախստականի կարգավիճակի, քանի որ ստացել են ՏՏ քաղաքացիություն): Նման դեպքերում ՄԱԿ ՓԳՏ-ն, որպես կանոն, աջակցում է նաև նման անձանց խնդիրների (առավելապես տնտեսական և սոցիալական բնույթի) լուծմանը:

Փախստական – այն անձը, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով զբնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից կամ, չունենալով քաղաքացիություն և զբնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ: Այս սահմանումը հիմնված է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի վրա: Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) 1969 թվականի կոնվենցիայով «փախստական» հասկացությունը սահմանվում է որպես ցանկացած անձ, որին հարկադրել են լքել իր երկիրը՝ «արտաքին ագրեսիայի, օկուպացիայի, օտարերկրյա գերիշխանության կամ այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք լրջորեն խախտում են հասարակական կարգը նրա ծագման կամ քաղաքացիության երկրի մի մասում

կամ ամբողջ տարածքում»: Նմանապես, 1984 թվականի Կարթագենի հռչակագրում նշվում է, որ փախստականներ են համարվում նաև այն անձինք, որոնք փախուստի են դիմում իրենց երկրից, «քանի որ նրանց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը վրանգ է սպառնում համընդհանուր բռնության, օտարերկրյա ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ այնպիսի հանգամանքների պատճառով, որոնցով լրջորեն խախտվել է հասարակական կարգը»:

1. Միգրացիայի առանձին տեսակ չէ (ըստ դատում ներկայացված դասակարգման)

Ա) Օրինական կամ արտոնված միգրացիան – սխալ է: Դատում քննարկված դասակարգումը հիմնված է միգրացիայի օրինականության և արտոնվածության վրա: Այս դասակարգման ներքո օրինական կամ արտոնված միգրացիան հանդիսանում է առանձին տեսակ:

Բ) Չարտոնված կամ անօրինական միգրացիան – սխալ է: Դատում քննարկված դասակարգումը հիմնված է միգրացիայի օրինականության և արտոնվածության վրա: Այս դասակարգման ներքո անօրինական կամ չարտոնված միգրացիան հանդիսանում է առանձին տեսակ:

Գ) Նարկոտիկ միգրացիան – սխալ է: Դատում քննարկված դասակարգումը հիմնված է միգրացիայի օրինականության և արտոնվածության վրա: Այս դասակարգման ներքո հարկադրված միգրացիան օրինական միգրացիայի առանձին ենթատեսակ է: Այն առանձնանում է այն պարճառով, որ դրա օրինականությունը բխում է ոչ թե պետության կողմից այն արտոնելուց, այլ փախստականների միջազգային իրավունքի ուժով դրա արգելման անթույլատրելիությունից:

Դ) Աշխատանքային միգրացիան – ճիշտ է: Միգրացիայի այս տեսակը Դատում քննարկված դասակարգման շրջանակներում չի կարող որակվել որպես միգրացիայի առանձին տեսակ, քանի որ միգրացիայի աշխատանքային լինելը վերաբերում է դրա վերջնական նպատակին, և այն միաժամանակ կարող է լինել օրինական կամ անօրինական: Առկա դասակարգումը հիմնված է միգրացիայի օրինականության և արտոնվածության վրա: Այս դասակարգման ներքո հարկադրված միգրացիան օրինական միգրացիայի առանձին ենթատեսակ է: Այն առանձնանում է այն պարճառով, որ դրա օրինականությունը բխում է ոչ թե պետության կողմից այն արտոնելուց, այլ փախստականների միջազգային իրավունքի ուժով դրա արգելման անթույլատրելիությունից:

2. Միջազգային իրավունքի ընդհանուր համարեքստում ազատ տեղաշարժվելու իրավունքի բովանդակությունն առավել ամբողջական ներկայացված է հետևյալ տարբերակում՝

Ա) Ազատ տեղաշարժվելու իրավունքի ուժով յուրաքանչյուր անձ ազատ է տեղաշարժվել պետությունների տարածքում և միջպետական սահմաններով – սխալ է: Միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ չի կարգավորում անձանց մուտքը երրորդ պետությունների տարածք՝ այս հարցը թողնելով պետությունների հայեցողությանը (բացառությամբ փախստականների միջազգային իրավունքով նախատեսված դեպքերի):

Բ) Ազատ տեղաշարժվելու իրավունքի ուժով յուրաքանչյուր անձ ազատ է տեղաշարժվել պետությունների տարածքում, սակայն դա չի ենթադրում իրավունք մուտք գործել որևէ այլ երկրի տարածք – սխալ է: Թեև այս տարբերակը ճիշտ է արտացոլում ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումները մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասով, սակայն այն հաշվի չի առնում փախստականների միջազգային իրավունքի ուժով առկա բացառությունը, որը պետք է հաշվի առնվի հարցը միջազգային իրավունքի ընդհանուր համարեքստում դիտարկելիս:

Գ) Ազատ տեղաշարժվելու իրավունքի ուժով յուրաքանչյուր անձ ազատ է տեղաշարժվել պետությունների տարածքում, սակայն դա չի ենթադրում իրավունք մուտք գործել որևէ այլ երկրի տարածք՝ բացառությամբ փախստականների իրավունքով նախատեսված դեպքերի – ճիշտ է: Այս իրավունքի ուժով յուրաքանչյուր անձ ազատ է դուրս գալ իր բնակության երկրից, սակայն դա չի ենթադրում իրավունք մուտք գործել որևէ այլ երկրի տարածք, բացառությամբ փախստականների միջազգային իրավունքով նախատեսված դեպքերի:

Դ) Ազգաբնակչության փոփոխությունները և իրավունքները երաշխավորում է բացառապես փախստականների՝ պետությունների տարածքում ազգաբնակչության փոփոխությունները – սխալ է: Փախստականներն ունեն ազգաբնակչության լրացուցիչ երաշխիքներ, սակայն ընդհանուր առմամբ ազգաբնակչության փոփոխությունները պարզապես է բոլոր անձանց:

3. 1920-ականներին փախստականների իրավունքի ձևավորման հիմնական պարզաբան հանդիսացան հետևյալ իրադարձությունները՝

Ա) Մուսոլինիի և Նիվերի մուտքը քաղաքականություն – սխալ է: Թեև ֆաշիստական Գերմանիայի գործողությունները հանգեցրել են մարդկության պարմության մեջ փախստականների ամենամեծ ալիքին, սակայն դա պետի է ունեցել Երկրորդ աշխարհամարտի և դրան նախորդող տարիների ընթացքում, երբ փախստականների իրավունքն արդեն իսկ ձևավորման փուլում էր:

Բ) 1916 թ. ապրիլյան ապստամբությունն Իռլանդիայում – սխալ է: Այս ապստամբությունը կարևոր պարմական իրադարձություն էր, սակայն այն որևէ նկատելի ազդեցություն չի ունեցել փախստականների իրավունքի ձևավորման վրա:

Գ) Առաջին համաշխարհային պատերազմ, Ռուսական ու Օսմանյան կայսրությունների փլուզում և Մեծ Եղեռն – ճիշտ է: Այս արհավիրքներից փախչող անձիք սփռվել էին աշխարհով մեկ՝ չունենալով կացարան, գոյատևման միջոցներ և չկարողանալով ապավինել իրենց քաղաքացիության պետությունների պաշտպանությանը:

Նենց դա նորաստեղծ Ազգերի լիգային ստիպեց միջոցներ ձեռնարկել փախստականների խնդրի լուծման համար, որոնց թվին էին պարկանում փախստականների հարցերով զբաղվող հանձնակատարի պաշտոնի հիմնումը և ռուս ու հայ փախստականներին անձր հասարակական փաստաթղթերի տրամադրման մասին համաձայնագրի կնքումը:

Դ) Ազգերի լիգայի ստեղծումը – սխալ է: Ազգերի լիգան առանցքային դեր է ունեցել փախստականների իրավունքի ձևավորման գործում: Սակայն Ազգերի լիգան այս ոլորտում իր գործունեությունը ստիպված է եղել սկսել Առաջին համաշխարհային պատերազմի, Ռուսական ու Օսմանյան կայսրությունների փլուզման և, մասնավորապես, Մեծ Եղեռնի հետևանքով փախստականների հիմնահարցի առաջացման պարզաբանով: Ուստի Ազգերի լիգայի ստեղծումը հանդիսացել է փախստականների իրավունքի ձևավորման կարևոր գործոն, սակայն ո՛չ դրա հիմնական պարզաբան:

4. Նայ փախստականներին անձր հասարակական փաստաթղթերի («Նանսենյան անձնագրերի») տրամադրման իրավական հիմք է հանդիսացել՝

Ա) 1922 թ. ստորագրված համաձայնագիրը – սխալ է: Այս համաձայնագիրը կարգավորում էր միայն ռուս փախստականներին անձր հասարակական փաստաթղթեր («Նանսենյան անձնագրերի») տրամադրելու հարցը:

Բ) 1924 թ. ստորագրված համաձայնագիրը՝ 1922 թ. համաձայնագիրը լրացնելու վերաբերյալ – ճիշտ է: Նենց այս համաձայնագիրը նախատեսեց անձր հասարակական փաստաթղթերի («Նանսենյան անձնագրերի») տրամադրում նաև հայ փախստականներին:

Գ) 1926 թ. ստորագրված համաձայնագիրը՝ 1922 թ. համաձայնագիրը (1924 թ. լրացումներով) լրացնելու և փոփոխելու վերաբերյալ – սխալ է: Այս համաձայնագիրը ընդլայնեց հայ և ռուս փախստականների երաշխիքները՝ նրանց հնարավորություն տալով օգտվել մասնակից երկրներում բնակվելու, ազգաբնակչության փոփոխությունները: Սակայն դրա ստորագրման պահին 1924 թ. ստորագրված համաձայնագրով արդեն նախատեսված էր հայ

փախստականների իրավունքը ստանալ անձը հաստատող փաստաթղթեր («Նանսենյան անձնագրեր»):

Դ) 1928 թ. Ժնևում կայացած կոնֆերանսում մշակված երեք համաձայնագրերը փախստականների վերաբերյալ – սխալ է: Այս փաստաթղթերից մեկն էր ռուս և հայ փախստականների իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրը, որն ընդհանուր առմամբ հստակեցնում էր 1922 թ. Նամաձայնագրի դրույթները: Այն նաև էլ ավելի ընդլայնեց հայ և ռուս փախստականների երաշխիքները: Սակայն դրա ստորագրման պահին 1924 թ. ստորագրված համաձայնագրով արդեն նախատեսված էր հայ փախստականների իրավունքը ստանալ անձը հաստատող փաստաթղթեր («Նանսենյան անձնագրեր»):

5. 1946 թ. ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծված Փախստականների միջազգային կազմակերպության հիմնական նպատակն էր՝

Ա) Փախստականների ու ներքին տեղահանվածների ռեպարիացիան և վերաբնակեցումը – ճիշտ է: Փախստականների միջազգային կազմակերպությունն ի սկզբանե ստեղծվել էր որպես ժամանակավոր կառույց, որի հիմնական նպատակն էր փախստականների ու ներքին տեղահանվածների ռեպարիացիան և վերաբնակեցումը, և այն այս ուղղությամբ ակտիվորեն իրականացնում էր օպերատիվ միջոցառումներ:

Բ) փախստականների ու ներքին տեղահանվածների միջազգային պաշտպանության ապահովումը – սխալ է: Նշվածը հանդիսանում է 1949 թ.-ին հիմնադրված ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՏ) նպատակներից մեկը՝ ըստ ՄԱԿ ՓԳՏ Կանոնադրությանը:

Գ) Փախստականներին ու ներքին տեղահանվածներին մարդասիրական օգնություն ցուցաբերելը – սխալ է: Նշվածը հանդիսանում է 1949 թ.-ին հիմնադրված ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՏ) նպատակներից մեկը՝ ըստ ՄԱԿ ՓԳՏ Կանոնադրությանը:

Դ) Փախստականներին սոցիալական օգնություն ցուցաբերելը – սխալ է: Նշվածը հանդիսանում է 1949 թ.-ին հիմնադրված ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՏ) գործունեության տեսակներից մեկը, սակայն դա երբևէ չի հանդիսացել ՄԱԿ ՓԳՏ կամ Փախստականների միջազգային կազմակերպության նպատակներից մեկը:

6. Ինչպիսի ժամկետային սահմանափակումներ են, առկայության դեպքում, ներկայումս սահմանված ՄԱԿ ՓԳՏ գործունեության նկատմամբ՝

Ա) Այն գործում է որոշակի ժամկետով – սխալ է: Ի սկզբանե ՄԱԿ ՓԳՏ-ն ստեղծվել է որպես ժամանակավոր կառույց, սակայն ՄԱԿ Գերագույն վեհաժողովի 2003 թ. 58/153 բանաձևով դրա գործունեությունը սահմանվեց անժամկետ՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը:

Բ) Այն գործում է որոշակի ժամկետով, որը պարբերաբար երկարացվում է ՄԱԿ Գերագույն վեհաժողովի կողմից – սխալ է: Ի սկզբանե ՄԱԿ ՓԳՏ-ն ստեղծվել է որպես ժամանակավոր կառույց, և մի շարք անգամ դրա գործունեության ժամկետը երկարացվել է որոշակի ժամկետով: Սակայն ՄԱԿ Գերագույն վեհաժողովի 2003 թ. 58/153 բանաձևով դրա

գործունեությունը սահմանվեց անժամկետ՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը:

Գ) Այն գործում է անորոշ ժամկետով՝ առանց որևէ ժամկետային սահմանափակման – սխալ է: ՄԱԿ Գերագույն վեհաժողովի 2003 թ. 58/153 բանաձևով դրա գործունեությունը սահմանվեց անժամկետ՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը: Ուստի չի կարելի պնդել, որ ՄԱԿ ՓԳՏ գործունեությունը չունի որևէ ժամկետային սահմանափակում:

Դ) Այն գործում է առանց հստակ ժամկետային սահմանափակման՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը – ճիշտ է: Ի սկզբանե ՄԱԿ ՓԳՏ-ն ստեղծվել է որպես ժամանակավոր կառույց, սակայն ՄԱԿ Գերագույն վեհաժողովի 2003 թ. 58/153 բանաձևով դրա գործունեությունը սահմանվեց անժամկետ՝ մինչ փախստականների հիմնախնդիրների լուծումը:

7. ՄԱԿ ՓԳՏ գործունեության հիմնական նպատակն է

Ա) Փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելը – սխալ է: Ըստ կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՏ-ն իրականացնում է մարդասիրական բնույթի գործունեություն, սակայն դրա հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելը:

Բ) Փախստականներին սոցիալական օգնություն ցուցաբերելը – սխալ է: Ըստ կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՏ-ն իրականացնում է սոցիալական բնույթի գործունեություն, սակայն դրա հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելը:

Գ) Փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելը – ճիշտ է: Ըստ կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՏ-ի հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելը:

Դ) Ապաքաղաքականացված բնույթի գործողությունների միջոցով փախստականների հիմնախնդիրները բարձրաձայնելը և դրանք լուծելը – սխալ է: Ըստ կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՏ-ն ապաքաղաքականացված կառույց է, որի հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանություն տրամադրելը: Այսպիսով՝ ապաքաղաքականացված լինելը ՄԱԿ ՓԳՏ-ի հատկանիշ է, բայց ապաքաղաքականացված բնույթի գործողությունների միջոցով փախստականների հիմնախնդիրների բարձրաձայնումն ու դրանց լուծումն ինքնին՝ դրա գործունեության հիմնական նպատակը չեն:

8. 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 1967 թ. Արձանագրության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն՝

Ա) Նախատեսում է Կոնվենցիայի խախտումների ընդդատություն Մարդու Իրավունքների Նանձնաժողովին – սխալ է: Կոնվենցիայի խախտումների առնչությամբ սահմանված չէ որևէ միջազգային դատական կամ վերահսկողական մարմնի ընդդատություն կամ իրավասություն:

Բ) Ապահովում է Կոնվենցիայի կիրառումն առանց փարաձեռնային կամ աշխարհագրական սահմանափակումների – ճիշտ է: 1951 թ. կոնվենցիան կիրառվում է միայն մինչև 1951 թ. հունվարի 1-ը Եվրոպայում կամ այլուր փեդի ունեցած իրադարձությունների արդյունքում փախստական դարձած անձանց նկատմամբ: Արձանագրությունը վերացնում է այս սահմանափակումը՝ ապահովելով Կոնվենցիայի կիրառումն առանց փարաձեռնային կամ աշխարհագրական սահմանափակումների:

Գ) Նախատեսում է պետությունների պարտավորություն համագործակցել ՄԱԿ ՓԳՏ-ի հետ-սխալ է: Թեև նման պարտավորություն նախատեսված է 1967 թ.Արձանագրությամբ, սակայն այն նախատեսված է նաև Կոնվենցիայի 35-րդ հոդվածով: Ուստի արձանագրության այս դրույթը ինքնին որևէ էական նշանակություն կամ կարևորություն չունի:

Դ) Նախատեսում է պետությունների կողմից Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցների ներկայացում ՄԱԿ ՓԳՏ-ին – սխալ է: Արձանագրությունը նախատեսում է պետությունների պարտականություն ՄԱԿ Գլխավոր քարտուղարին հաղորդել այն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին, որոնք նրանք կարող են ընդունել Արձանագրության կատարումն ապահովելու համար: Սակայն այս պարտավորությունը չի նախատեսում Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցների կամ առհասարակ նման կատարման վերաբերյալ բովանդակային տեղեկությունների փրամադրում:

9. ՄԱԿ ՓԳՏ առավել լայն մանդատը վերաբերում է՝

Ա) Փախստականներին և ապաստան հայցող անձանց – ճիշտ է: ՄԱԿ ՓԳՏ-ի հիմնական նպատակն է փախստականներին միջազգային պաշտպանության փրամադրումը, և այդ նպատակին համահունչ ՄԱԿ ՓԳՏ առավել լայն մանդատը վերաբերում է փախստականներին և ապաստան հայցող անձանց: Այս մանդատի շրջանակներում ՄԱԿ ՓԳՏ-ն փրամադրում է միջազգային պաշտպանություն և մարդասիրական օգնություն, և ձգտում է ապահովել համապատասխան անձանց հիմնախնդիրների երկարապես լուծումներ: Բ) Վերադարձող անձանց – սխալ է: Ի սկզբանե ենթադրվում էր, որ ՄԱԿ ՓԳՏ մանդատը չի փրամադրում վերադարձող անձանց վրա, քանի որ վերադարձի պահից նրանք ֆորմալ դադարում են լինել փախստական : Սակայն ներկայումս ՄԱԿ ՓԳՏ-ն նրանց մասով իրականացնում է գործունեություն, որը կենտրոնացած է միջազգային պաշտպանության ու հիմնախնդիրների երկարապես լուծումների շուրջ: Այս մանդատը բխում է այն հանգամանքից, որ վերադարձը համապատասխան փախստականի հիմնախնդիրների երկարապես լուծման մաս է:

Գ) Ապարիդներին – սխալ է: Ապարիդների մասով ՄԱԿ ՓԳՏ մանդատը ենթադրում է գործողություններ ապարիդների հայտնաբերման, ապաքաղաքացիության կանխարգելման, նվազեցման և ապարիդների պաշտպանության ոլորտներում: Ուստի այս մանդատն էապես ավելի նեղ է, քան փախստականներին և ապաստան հայցող անձանց վերաբերող մանդատը, և չի ներառում, մասնավորապես, նրանց մարդասիրական օգնություն ցուցաբերելը կամ նրանց հիմնախնդիրների երկարապես լուծումներ ապահովելը:

Դ) Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձանց – սխալ է: Միջազգային պաշտպանության իրավունք ունեցող այլ անձանց մասով ՄԱԿ ՓԳՏ մանդատն առավելապես բխում է մարդասիրական նկատառումներից, և առավել արդիական է այնպիսի իրավիճակներում, երբ գործնականում դժվար է փրամադրել այդ անձանց և փախստականների կարգավիճակի իրավունք ունեցողներին: Ուստի այն ընդհանուր առմամբ աճանցյալ է փախստականներին և ապաստան հայցող անձանց վերաբերող մանդատից:

10. Փախստականների կամավոր վերադարձի, ինտեգրման և ֆինանսական աջակցության միջոցով փախստականների հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործունեությունը կազմում է ՄԱԿ ՓԳՏ-ի գործունեության հետևյալ ուղղությունը՝

Ա) Փախստականներին և ապաստան հայցող անձանց հիմնախնդիրների երկարապարկ լուծումներ – ճիշտ է: ՄԱԿ ՓԳՏ-ն փախստականների և ապաստան հայցող անձանց հիմնախնդիրների երկարապարկ լուծումները հիմնականում ապահովում է փախստականների կամավոր վերադարձին, ինքնաբավության ապահովմանը, ինտեգրման և ֆինանսական աջակցության միջոցով փախստականների հիմնախնդիրների լուծմանը ուղղված միջոցառումների միջոցով:

Բ) Մարդասիրական օգնություն – սխալ է: ՄԱԿ ՓԳՏ-ն որպես կանոն մարդասիրական օգնություն է ցուցաբերում հրապապ ճգնաժամերի ժամանակ՝ դրանց անմիջական հետևանքների կարճաժամկետ հաղթահարման նպատակով, մինչդեռ 10-րդ կետում նկարագրված գործունեությունը նպատակաուղղված է երկարապարկ լուծումների ապահովմանը:

Գ) Միջազգային պաշտպանության ապահովում – սխալ է: Այս գործառույթը ՄԱԿ ՓԳՏ-ն իրականացնում է փախստականների պաշտպանության իրավական հիմքերի զարգացմանը նպաստելու, այդ պաշտպանությանն ուղղված համագործակցություն հաստատելու և զարգացնելու, փախստականների ընթացիկ և երկարապարկ հիմնախնդիրների մասով օգնություն ցուցաբերելու (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ հավաքագրելու և դրանք փախստականների աջակցությանը ուղղելու) միջոցով: Այսինքն՝ միջազգային պաշտպանության գործառույթը ավելի լայն է և չի սահմանափակվում երկարապարկ հիմնախնդիրների լուծմամբ, ինչին և վերաբերում է 10-րդ կետում նկարագրված գործունեությունը:

Դ) Խոցելի և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց հետ կապված հիմնահարցերի լուծում – սխալ է: Գործունեության այս ուղղության շրջանակներում ՄԱԿ ՓԳՏ-ն փորձադրում է նպատակաուղղված աջակցություն, որը կնպաստի հատկապես առավել խոցելի անձանց (այլ ոչ թե բոլոր փախստականների) ինքնաբավությանը և ինտեգրմանը (այդ թվում՝ ներգրավվելով տեղական գործընկեր կազմակերպություններ):

ԼՐԱՑՈՒՑԻՉՄԵՂԻԱ-ՆՅՈՒԹԵՐ

1. Convention of 28 October, 1933 relating to the International Status of Refugees, League of Nations, Treaty Series Vol. CLIX No. 3663.
2. Gilbert Jaeger, On the history of the international protection of refugees, IRRC September 2001 Vol. 83 No 843, 727.
3. Илья Тодорович, Юрий Моргун, ООН и права беженцев, Белорусский журнал международного права и международных отношений, 2004, No 3.
4. Л. В. Павлова, А. В. Селиванов, Международно-правовой статус беженца, Пособие для студентов вузов, Минск: Тесей, 2006, Глава 1. Формирование и развитие института прав беженцев, его источники и принципы, электронный режим доступа :<http://evolutio.info/content/view/1284/187/> [2016-04-24 6:34:17 PM] и Глава
5. Международно-правовой механизм защиты прав беженцев, электронный режим доступа :<http://evolutio.info/content/view/1288/187/> [2016-04-24 8:25:17 PM].
5. Юрий Моргун, УВКБ ООН: Международная защита беженцев, Белорусский журнал международного права и международных отношений, 2000, No 2.
6. Юрий Сарашевский, Роль лиги наций в формировании права беженцев, Белорусский журнал международного права и международных отношений, 2000, No 1.
7. Соглашение о выдаче удостоверений личности русским и армянским беженцам, одополнении и внесении изменений в Соглашения от 5 июля 1922 г. и 31 мая 1924 г., Женева, 12 мая 1926 г..
8. Соглашение о правовом статусе русских и армянских беженцев, Женева, 30 июня 1928 года.
9. Соглашение о распространении на другие категории беженцев некоторых мер, принятых в пользу русских и армянских беженцев, Женева, 30 июня 1928 г.